ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2026 թվականի N 11-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ,ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբեր 24-ի թիվ 107-Ա որոշումը և Թումանյան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով՝

Որոշում եմ.

1. Ստեղծել Թումանյան համայնքում 2026 թվականին Թումանյանի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հանձնաժողովի նախագահին՝

1) կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

2) հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:

3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի 2-ի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

Հաստատված է
Թումանյան համայնքի ղեկավարի
«09» հուլիսի թիվ N 11-Ա որոշմամբ

# ԿԱԶՄ

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| հ/հ | Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը | Զբաղեցրած պաշտոնը, զբաղմունքը | Հանձնաժողովում կարգավիճակը |
|---|---|---|---|
| 1 | Արման Մոսինյան | Համայնքի ղեկավարի օգնական | Հանձնաժողովի նախագահ |
| 2 | Արմիկ Մուրադյան | Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ հաշվապահ | Հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| 3 | Դավիթ Վանյան | Ավագանու անդամ | Հանձնաժողովի անդամ |
| 4 | Արմեն Չոփուրյան | Համայքի ղեկավարի խորհրդական | Հանձնաժողովի անդամ |
| 5 | Մառ Քոչարյան | «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն | Հանձնաժողովի անդամ |
| 6 | Սյուզաննա Հովսեփյան | «ՀԿ կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ | Հանձնաժողովի անդամ |
| 7 | Միլենա Պապոյան | Համայնքի ակտիվ բնակիչ | Հանձնաժողովի անդամ |
| 8 | Սրբուհի Քեքեջյան | Կամավոր | Հանձնաժողովի անդամ |
| 9 | Արմեն Բաղդասարյան | Կամավոր | Հանձնաժողովի անդամ |
| 10 | Ռոման Թորոսյան | Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | Հանձնաժողովի քարտուղար |

ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված 2
Հաստատված է
Թումանյան համայնքի ղեկավարի
« 09» հունվարի 2026թ-ի N 11-Ա որոշմամբ

## ՀԱՅՏ
## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

| | | |
|---|---|---|
| 1 | Առաջարկի հեղինակի անուն,ազգանուն /անվանում/ | |
| 2 | Կոնտակտային տվյալներ /հասցե, հեռախոս, էլ.փոստ/ | |
| 3 | Առաջարկի անվանումը, նկարագրությունը | |
| 4 | Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը | |
| 5 | Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները | |
| 6 | Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2026 թվականի N 12-Ա

## ԱՇՈՏ ՀՐԱՆՏԻ ՉՈՓՈՒՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 նոյեմբերի 28-ի թիվ 94-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 11102022-06-0069 և 2025 թվականի դեկտեմբերի 30-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 20 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-035-0142-0021 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 1.665525 հա մակերեսով խոտհարք 26250 /քսանվեց հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Աշոտ Հրանտի Չոփուրյանին /ծնված՝ 12.08.1966թ/:
2. Աշոտ Հրանտի Չոփուրյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում
4. Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2026 թվականի N 13-Ա

## ԱՐԱՐԱՏ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 նոյեմբերի 28-ի թիվ 95-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 24022025-06-0047 և 2025 թվականի դեկտեմբերի 30-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 21 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-035-0135-0071 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.36455 հա մակերեսով վարելահող 8400 /ութ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Արարատ Արշալույսի Ղազարյանին /ծնված՝ 30.05.1988թ/:
2. Արարատ Արշալույսի Ղազարյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2026 թվականի N 14-Ա

## ԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 նոյեմբերի 28-ի թիվ 96-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 20112024-06-0049 և 2025 թվականի դեկտեմբերի 30-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 22 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-035-0108-0099 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.96258 հա մակերեսով վարելահող 26250 /քսանվեց հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Արեն Արամայիսի Աղաջանյանին /ծնված՝ 03.03.1985թ/:
2. Արեն Արամայիսի Աղաջանյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր,որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2026 թվականի N 15-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴՍԵՂ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-035-0106-0016 ԾԱԾԿԱԳՐԻ 0.64367 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՐԱ ՎԱԶԳԵՆԻ ԳՈԳԻՆՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետերի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 93-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 18 արձանագրությունը, ըստ որի՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղում գտնվող 06-035-0106-0016 կադաստրային ծածկագրի 0.64367 հա մակերեսովբնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Արա Վազգենի Գոգինյանը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0106-0016 կադաստրային ծածկագրի 0.64367 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը,որն ընդգրկված չէՀայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,օտարել Արա Վազգենի Գոգինյանին՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա

ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 12 810 000 (տասներկու միլիոն ութ հարյուր տաս հազար ) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265129222 հաշվեհամարին:

3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:

4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:

5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2026 թվականի N 16-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 107-Ա,Թումանյան համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 9-ի թիվ 11-Ա որոշումները և Թումանյան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով՝

Որոշում եմ.

1. Հաստատել Թումանյան համայնքում 2026 թվականին Թումանյանի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

Հավելված
Հաստատված է
Թումանյան համայնքի ղեկավարի
«12» հունվարի 2026թ-ի N 16-Ա որոշմամբ

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ-Ի ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

| N | Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ | Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները) | Պատասխանատու և կատարողներ | Աջակցող թիմակիցներ | ժամկետներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Նախապատրաստական փուլ | 1.Թումանյան համայնքի ավագանու որոշում /որոշման հրապարակում/<br>2. Թումանյան համայնքի ղեկավարի որոշում /որոշման հրապարակում/ | Համայնքապետարանի աշխատակազմ | | 24.12.2025թ.<br>09.01.2025թ. |
| 2. | Իրազեկման փուլ | Բնակչության իրազեկում /տեղեկությունների հրապարակում համայնքի պաշտոնական կայքում/ | Հանձնաժողով | Համայնքապետարանի աշխատակազմ | 13.01.2026-20.01.2026թթ |
| 3. | Առաջարկների ներկայացման փուլ | Առաջարկությունների ընդունում | Հանձնաժողով | Համայնքապետարանի աշխատակազմ | 21.01.2026-30.01.2025թթ |
| 4. | Առաջարկների նախնական գնահատման փուլ | Հրապարակվող առաջարկների տեղադրում համայնքի պաշտոնական կայքում | Հանձնաժողով | Համայնքապետարանի աշխատակազմ | 02.02.2026-04.02.2026թթ |
| 5. | Հանրային քննարկումների և լսումների փուլ | Գործընթացի վերաբերյալ համայնքում կազմակերպել քննարկումներ | Հանձնաժողով | Համայնքապետարանի աշխատակազմ, վարչական ղեկավարներ | 02.02.2026-17.02.2026թթ |
| 6. | Քվեարկության փուլ | Հրապարակված առաջարկների քվեարկություն | Հանձնաժողով | Համայնքապետարանի աշխատակազմ, | 19.02.2026-27.02.2026թթ |
| 7. | Իրականացման փուլ | 1.Հաղթող առաջարկների բացահայում և սուբվենցիայի հայտի ներկայացում ՏԿԵՆ<br>2.Հաղթած առաջարկների իրագործում | Հանձնաժողով | Համայնքապետարանի աշխատակազմ, | 02.03.2026-25.12.2026թթ |
| 8. | Հաշվետվության փուլ | Գործընթացի վերաբերյալ արդյունքների ներկայացում | Հանձնաժողով | Համայնքապետարանի աշխատակազմ, | 03.03.2026-25.12.2026թթ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2026 թվականի N 17-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Լևոն Ռաֆիկի Զոփուրյանի /մուտք 30.09.2025թ./ 670 դիմումը՝ Դսեղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22 .04.1991թ. թիվ 6 որոշումից քաղվածքները, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ.

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Լևոն Ռաֆիկի Զոփուրյանի /ծնված՝ 24.01.1982թ/, Անուշ Ռաֆիկի Զոփուրյանի /ծնված 27.12.1984թ./,Սուսաննա Ռաֆիկի Զոփուրյան /ծնված 26.02.1988թ./ և Ալիսա Արտուշի Զոփուրյանի/ ծնված 17.07.1960թ./ բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 26-րդ փողոց 2 հասցեում 06-035-0063-0003 ծածկագրում գտնվող 0.15 հա և հատկացվածից ավել 0.01741 հա մակերեսով տնամերձ հողամասի և 92.0 քմ մակերեսով բնակելի տան,24.2 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի,26.5 քմ մակերեսով ավտոտնակի, 14.2 քմ մակերեսով ամառային խոհանոցի, 49.7 քմ մակերեսով անասնաշենքի,6.6 քմ մակերեսով ծածկի նկատմամբ:
2.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
3. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-
րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:
5.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 09.10.2025թ. թիվ 349-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2026 թվականի N 18-Ա

## <<ԱՐԱՐԱՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ>> ԱՁ-ԻՆ 01.01.2026Թ.-30.06.2026Թ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն որոշման պահանջով և <<Արարատ Հախվերդյան>> ԱՁ-ի տնօրեն Արարատ Հախվերդյանի հայտը՝

Որոշում եմ.

1<<Արարատ Հախվերդյան>> ԱՁ-ի տնօրեն Արարատ Հախվերդյանին տալ 01.01.2026թ.-30.06.2026թ.ժամանակահատվածում, Թումանյան համայնքի, գ.Դսեղ, 4-րդ փ.,տնակ 26 հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Արարատ Հախվերդյան>> ԱՁ-ի իրավական ակտն ընդունելու մասին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2026 թվականի N 19-Ա

## <<ԷԼԼԱ ՊՈՂՈՍՅԱՆ>> ԱՁ-ԻՆ 01.01.2026Թ.-31.03.2026Թ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն որոշման պահանջով և <<Էլլա Պողոսյան>> ԱՁ-ի տնօրեն Էլլա Պողոսյանի հայտը՝

Որոշում եմ.

1.<<Էլլա Պողոսյան>> ԱՁ-ի տնօրեն Էլլա Պողոսյանին տալ 01.01.2026թ.-31.03.2026թ.ժամանակահատվածում, Թումանյան համայնքի, գ.Դսեղ, Փոքր Հրապարակ փ.,շ.4 հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էլլա Պողոսյան>> ԱՁ-ի իրավական ակտն ընդունելու մասին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2026 թվականի N 20-Ա

## <<ԳՈՀԱՐ ՂՈՒԼԻՆՅԱՆ>> ԱՁ-ԻՆ 01.01.2026Թ.-31.03.2026Թ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն որոշման պահանջով և <<Գոհար Ղուլինյան>> ԱՁ-ի տնօրեն Գոհար Ղուլինյանի հայտը՝

Որոշում եմ.

1. <<Գոհար Ղուլինյան>> ԱՁ-ի տնօրեն Գոհար Ղուլինյանին տալ 01.01.2026թ.-31.03.2026թ.ժամանակահատվածում, Թումանյան համայնքի, գ.Դսեղ, Հրապարակ,շ.2 հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գոհար Ղուլինյան>> ԱՁ-ի իրավական ակտն ընդունելու մասին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան